ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1878-1914 (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ)

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի խնդիրը հանդիսանում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության բաղկացուցիչ մասերից մեկը: Ներկա հոդվածում մենք կփորձենք ներկայացնել և վերլուծել XIXդ. երկրորդ կեսի և XXդ. սկզբի Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա բոլոր ամբողջական վիճակագրական տվյալները:

Ինչպես հայտնի է՝ Վանի նահանգը[1] որպես առանձին վարչա-տարածքային միավոր առաջ է գալիս 1877թ., իսկ նրա կազմավորումը հիմնականում ավարտվել է 1888թ.՝ Հեքյարի գավառի միացումով:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վանի նահանգը բաղկացած էր Վանի և Հեքյարիի երկու գավառներից: Վանի գավառը իր հերթին բաժանվում էր վեց գավառակների՝ Վան (գյուղախմբերը՝ Վան-Տոսպ, Հայոց ձոր, Արճակ, Թիմար, Բերկրի), Արճեշ, Արծկե (Աղիլջազ), Գյավաշ (գ-խմբերը՝ Կարկառ, Կարճկան, Մոկս), Շատախ կամ Մամուրեթ ուլ Ռեշատ (գյուղախումբը՝ Նորդուզ) և Սարայ կամ Մահմուդիե: Հեքյարիի գավառի կազաներն էին՝ Հեքյարի, Խոշաբ կամ Մամուրեթ-ուլ Համիդ, Աղբակ, Ջուլամերկ, Գյավառ և Շամդինա:

Վանի նահանգի եկեղեցական-թեմական բաժանումը աչքի էր ընկնում բարդությամբ: Վիլայեթը գտնվում էր երկու աթոռների իրավասության տակ՝ Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի՝ իր Վանի արքեպիսկոպոսական, Լիմ Կտուցի ու Աղբակի վանական վիճակներով, և Աղթամարի աթոռի՝ իր Աղթամարի կաթողիկոսական վիճակով: Վանի արքեպիսկոպոսական վիճակի մեջ մտնում էին Վան, Մահմուդիե, Արճեշ և Աղիլջազ կազաները, Լիմ-Կտուցի վանական վիճակը պարունակում էր Թիմար նահիեն, Աղբակի վանական վիճակը՝ Հեքյարի սանջակը, իսկ Աղթամարի կաթողիկոսական վիճակը ընդգրկում էր Գյավաշ, Շատախ և Կարճկան կազաները:[2]

Ստորև ներկայացնում ենք Վանի նահանգի հայ ազգաբնակչության թվաքանակի մասին տվյալները, ըստ տարբեր

աղբյուրների:

1. Օսմանյան աղբյուրները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

Վանի նահանգի վերաբերյալ մեր տրամադրության տակ գտնվող թուրքական վիճակագրական տվյալները, առաջին հերթին, օսմանյան պաշտոնական մարդահամարների տեղեկություններն են (1881/82-93, 1895, 1896, 1906, 1914), թուրքական նահանգային սալնամեների տվյալները (1875,1897), մեծ տերությունների դեսպաններին ներկայացրած աղյուսակները (1878-80, 1897):

Ըստ 1878-80թթ. մեծ տերություններին ներկայացրած վիճակագրական աղյուսակի՝ նահանգի հայ արական բնակչության թիվը 39113 անձ էր, որից կաթոլիկ հայեր՝ 100-ը:[3]

1881/82-1893թթ. մարդահամարի տվյալներով նահանգի հայ բնակչության ընդհանուր թիվն էր 60448 մարդ (Վան՝ 33053, Արճեշ՝ 3711, Աղիլջևազ՝ 4040, Կարճկան՝ 6114, Գյավաշ՝ 4802, Մոկս՝ 4234, Մուրադիե՝ 1383, Շատախ՝ 3793, Հեքյարի՝ 1066 մարդ):[4]

1897թ. Ռ. Դուտը մեծ տերությունների դեսպաններին ներկայացնում է նոր վիճակագրական աղյուսակ, ըստ որի նահանգում բնակվում էր 61933 հայ, այդ թվում Վանի գավառում՝ 59433, Հեքյարի գավառում՝ 2500 մարդ:[5]

Ըստ 1906թ. օսմանյան պաշտոնական մարդահամարի տվյալների նահանգում բնակվում էր 59382 հայ:[6]

1914թ. օսմանյան վիճակագրությամբ նահանգի հայ ազգաբնակչությունը կազմում էր 67792 մարդ, այդ թվում՝ Վանի գավառ. Վան՝ 33789, Արճեշ՝ 8083, Շատախ՝ 4292, Աղիլջևազ՝ 4849, Գյավաշ՝ 10520 մարդ. գումարը՝ 61533 մարդ:

Հեքյարիի գավառ. Հեքյարի՝ 3461 Ջուլամերկ՝ 296, Մահմուդիե՝ 528, Գյավառ՝ 959, Խոշաբ՝ 1015 մարդ. գումարը՝ 6259:[7]

Աղյուսակ 1. Օսմանյան մարդահամարների տվյալները Վանի վիլայեթի հայ ազգաբնակչության վերաբերյալ.

	1881/82-1893		1896[8]		1906		1914
	արական	իգական	արական	իգական	արական	իգական	ընդհ
Հայեր	34434	26014	26085	28966	33994	25388	
Գումար	60448		55051		59382		67792

2. Հայկական աղբյուրները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ

ա. Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակն ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնական տվյալների.

1878-1914թթ. Վանի նահանգի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի այլ նահանգների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ գոյություն ունեցող Հայոց պատրիարքարանի ամբողջական վիճակարական տվյալները կարելի է ըստ ծագման պայմանականորեն բաժանել երեք խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում 1878-80թթ. և 1913-14թթ. մարդահամարի տվյալները: Երկրորդ խմբում ընդգրկվում են Մ. Օրմանյանի կողմից պատրաստված երկու վիճակագրական ցուցակները, իսկ երրորդ խումբ են կազմում Ապահովաց հանձնաժողովի 1882 և 1912 թթ. վիճակագրական աղյուսակները: Ներկայացնենք դրանք պահպանելով ժամանակագրա-

կան կարգը:

Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից պատրաստած և 1880թ. մեծ տերությունների դեսպաններին ներկայացրած Արևմտյան Հայաստանի վիճակագրական աղյուսակի, որտեղ ամփոփված էին 1878-80թթ. մարդահամարի տվյալները, Վանի նահանգում (առանց Հեքյարիի) բնակվում էր 133859 հայ:

1878-80թթ. մարդահամարի գյուղ առ գյուղ ցուցակները պահպանվել են Ե. Չարենցի անվ. ԳԱԹ-ում: Դրանցից մենք իմանում ենք, որ մարդահամարը կատարվել էր Վանի պատրիարքական փոխանորդ եպիսկոպոս Երեմիա Տեկանցի անմիջական հսկողությամբ: Տվյալները ուղարկելիս, Տեկանցն իր ուղեկցական նամակում նշում է, որ գործադրել է ամեն ջանք՝ իրեն տված հանձնարարությունն ամենայն ճշտությամբ կատարելու համար. «...ամեն գավառը քաջահմուտ գրագիրներ ուղարկելով, յուրաքանչյուր ժողովրդոց թվահամարն ի գիր առնեին»:[9]

Ըստ 1878թ. մարդահամարի տվյալների նահանգի հայ բնակչության թիվն առանց Վան քաղաքի կազմում էր 98428 մարդ. Վան-Տոսպ՝ 10034, Հայոց Ձոր՝ 7744, Արճակ՝ 5,055, Թիմար՝ 12018, Բերկրի՝ 2398, Արճեշ՝ 8745, Արծկե՝ 10997, Կարճկան՝ 4466, Կարկառ՝ 1524, Մոկս՝ 8135, Գյավաշ՝ 7195, Շատախ՝ 6743, Նորդուզ՝ 2219, Ջուլամերկ՝ 440, Գավառ՝ 1465, Աղբակ՝ 7157, Խոշաբ՝ 1785, Մահմուդի՝ 308 մարդ:[10]

1906թ. բելգիացի դիվանագետ կոմս Վան դեն Սթինը «Օսմանահպատակ ոչ մահմեդականների իրավական դրությունը» գրքում ներկայացնում է Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանի կողմից իրեն տրամադրած վիճակագրական տվյալները, ըստ որի Վանի վիլայեթում բնակվում էր 191000 լուսավորչական հայ:[11]

Ըստ 1910թ. լույս տեսած Օրմանյանի «Հայոց եկեղեցի» աշխատության կից զետեղված վիճակագրության՝ նահանգի հայ բնակչության թիվը 192200 մարդ էր, որից 500-ը կաթոլիկ, 700 բողոքական: Բնակչությունն ըստ վիճակների բաշխվում էր հետևյալ կերպ՝ Վան՝ 100700, Լիմ-Կտուց՝ 11000, Աղբակ՝ 10000, Աղթամար՝ 70500 մարդ:[12]

Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և Դաշնակցության կուսակցության կողմից համատեղ ստեղծվում է Ապահովաց հանձնաժողովը, որը 1912թ. պատրաստում և Մեծ տերությունների դեսպաններին է ներկայացնում երկու վիճակագրական աղյուսակ, որոնցից առաջինի տվյալները վերաբերում էին 19-րդ դարի 80-ական թթ. սկզբներին, երբ Հայկական հարցը նոր էր մտել միջազգային դիվանագիտության օրակարգ և երկրորդը՝ 1912թ.: Ըստ առաջին աղյուսակի տվյալների 1882թ. Վանի վիլայեթի հայ բնակչության թիվը 400000 մարդ էր:[13]

Ապահովաց հանձնաժողովի կողմից պատրաստած վիճակագրական երկրորդ աղյուսակի տվյալներով նահանգը 1912 թ. ուներ արդեն 197000 հայ բնակչություն (Վան՝ 90000, Լիմ Կտուց՝ 13000, Արճեշ՝ 10000, Աղիլջևազ՝ 10000, Հեքյարի՝ 12000, Աղթամար՝ 62000 անձ):[14]

1913-14 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Վանի և Աղթամարի առաջնորդարանները կատարում են նոր մարդահամար, ըստ որի նահանգի հայ բնակչությունը կազմում էր 124478 մարդ, այդ թվում՝ Վանի գավառ. Վան ք. 4115 տուն, 24692 շունչ, Աղիլջևազ. 836 տուն, 6209 շունչ, Արճեշ. 1111 տուն, 9691 շունչ, Վան-Տոսպ.

1717 տուն, 13325 շունչ, Թիմար՝ 12731 շունչ, Բերկրի. 373 տուն, 2553 շունչ, Ապաղա. 204 տուն, 1341 շունչ, Հայոց Ձոր. 1687 տուն, 10164 շունչ, Շատախ. 989 տուն, 6560 շունչ, Մոկս. 715 տուն, 4417 շունչ, Գավաշ. 1156 տուն, 6688 շունչ, Կարճկան. 837 տուն, 6134 շունչ, Կարկառ. 417 տուն, 2996 շունչ, Մարայ՝ 5000:

Հեքյարիի գավառ. Աղբակ. 390 տուն, 7157 շունչ, Ջուլամերկ. 72 տուն, 636 շունչ, Գավառ. 148 տուն, 1184 շունչ, Խոշաբ՝ 3000:[15]

Աղյուսակ 2. Վանի վիլայեթի հայ բնակչության թվաքանակն ըստ հայոց պատրիարքարանի պաշտոնական տվյալների (1878-1914).

	1878-80	1906-10	1912	1914
Վան	133859	182200	185000	112498
Հեքյարի		10000	12000	11980
Գումար	133859	192200	197000	124478

բ. Հայկական այլ աղբյուրների վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

Վանի վիլայեթի հայ բնակչության վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ են տալիս մի շարք հայ հեղինակներ (Ռաֆֆի, Արսեն Թոխմախյան, Մ. Ավետիսյան, Ծերուկ, Մալխաս, Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան): Նրանց տեղեկությունները որոշ չափով լրացնում են պատրիարքարանի պաշտոնական տվյալները, շտկում դրանք: Ցավոք՝ ոչ բոլոր հեղինակներն են հստակորեն նշում, թե որ աղբյուրից են քաղել վիճակագրությունը:

Հայ մեծանուն գրող Ռաֆֆու տվյալներով Վանի նահանգում նախքան ռուս-թուրքական պատերազմն ապրում էր 43750 հայ ընտանիք. ընտանիքի միջին թիվն ընդունելով 8 հոգի նա ստանում է Վանի նահանգի հայ բնակչության մոտավոր թիվը՝ 350000:[16]

1879թ. Վահան Պարտիզակցու կողմից հրատարակած վիճակագրության համաձայն նահանգի հայ բնակչության թիվն էր 184000:[17]

Ըստ Բալկանյան պատերազմից անմիջապես հետո Պատրիարքարանին կից ստեղծված Սովելոց հանձնաժողովի վիճակագրական տվյալների 1880թ. նահանգում բնակվում էր 239480 հայ, այդ թվում՝ Վան ք.՝ 18965, Թիմար՝ 38889, Բերկրի՝ 16964, Խոշաբ՝ 9966, Աղբակ՝ 9959, Գավառ՝ 5975, Ջուլամերկ՝ 9887, Նորդուզ և Շատախ՝ 26245, Մոկս՝ 18575, Հայոց Ձոր՝ 18830, Խիզան և Կարճկան՝ 22713, Արծկե՝ 15615, Արճեշ՝ 26897 հայ:[18]

1880թ. նահանգի վերաբերյալ վիճակագրական տվյալներ է տալիս հայ ուսումնասիրող Երիցյանցը: Հեղինակը, որին ռուսական ռազմական իշխանությունների կողմից հանձնարարված էր եղել կազմել Բալկանյան պատերազմի ընթացքում ռուսական զորքերի կողմից գրավված տարածքների բնակչության վիճակագրությունը, որպես աղբյուր օգտագործել է զինապարտների և, աշարի գանձման ցուցակները, Էրզրումի առաջնորդարանի արխիվը, ինչպես նաև մի քանի տպագիր աղբյուրներ: Ըստ ուսումնասիրողի՝ նահանգի հայ ընտանիքների թիվն էր 18455, հայ բնակչության թիվը՝ 175773, որը բաշխվում էր հետևյալ կերպ՝ Վան ք, Վան-Տոսպ, Շավիլի և Հայոց ձոր 8394 տ. 83904 հայ, Արարտ նահիե 60տ, 550 հայ, Աղբակ կազա՝ 1200 տ. 10500 հայ, Շիկեաք նահիյե՝ 140 տ., 1000 հայ, Ջուլամերկ՝ 4500 հայ, Բեյթեուլ նահիյե՝ 80 տ. 810 հայ, Չալ նահիյե, Գավառ, Խումար և Ջելո՝ 543 տ., 4519 հայ, Շամդինան և Օրամար՝ 440 տ. 3245 հայ,

Մահմուդիե, Ղոթուր և Խոշաբ՝ 2216 տ. 12205 հայ, Արճեշ և Բերկրի 2248 տ. 24250 հայ, Աղիլջևազ 1904 տ. 19260 հայ, Շատախ և Նորդուզ՝ 1230 տ. 10990 հայ:[19]

1890թ. Օսմանյան կայսրության, այդ թվում՝ Վանի վիլայեթի ազգաբնակչության վերաբերյալ վիճակագրական տվյալներ է տալիս հայ ուսումնասիրող Մ. Ավետիսյանը: Ինչպես հեղինակը ինքն է նշում, վիճակագրական աղյուսակը կազմելիս նա օգտվել է թուրքական, հայկական և արևմտյան մի շարք աղբյուրներից, այդ թվում «Թուրքաց 1878ի Մալնամեն և 1889ին երկրին մեկ մասին պաշտոնապես շինված ազգահամարը, Ազգային պատրիարքարանի պաշտոնյաների տեղեկագիրները, եվրոպական մի քանի կարևոր աշխարհագիրների վիճակագրությունները և առոնց վրա ավելցունելով ստացված նորագույն ծանոթություններ»:[20] Ըստ հետազոտողի Վանի նահանգում բնակվում էր 194000 հայ, որից 150000-ը Վանի սանջակում, իսկ 40000-ը՝ Հեքյարիում:[21]

1904թ. «Մուրճ» ամսագրում տպագրվում է Վանի նահանգին նվիրված Ծերունկի հոդվածաշարը: Հեղինակը, հիմք ընդունելով 1883թ. կատարած «պաշտոնական մարդահամարի» տվյալները (ում կողմից է կատարված մարդահամարը չի նշում), գրում է, որ 1880-ական թթ. Վանի նահանգում բնակվում էր 200000 հայ: Ըստ ուսումնասիրողի, հոդվածի հրատարակման պահին վիլայեթի հայերի թիվն էր 145000:[22] Նա նաև տալիս է վիլայեթի հայ ազգաբնակչության մանրամասն վիճակագրությունը. Վան քաղաք՝ 15000 հայ, Կարճկան՝ 800, Շատախ՝ 3000, Աղիլջևազ՝ 800, Արճեշ՝ 300, Բերկրի՝ 1300, Մոկս՝ 2000, Թիմար՝ 3300, Հայոց Ձոր՝ 1650, Արճակ՝ 700, Ջուլամերկ՝ 350, Աղբակ՝ 1350, Գավառ՝ 50, Մահմուդիե՝ 500 և Մամուրեթ ուլ Համիդ՝ 2500 տուն հայ:[23]

Արևմտյան Հայաստանի նահանգների, այդ թվում և Վանի հայ բնակչության, թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ կան 1914թ. լույս տեսած Ներսիսյան դպրանոցի աշխարհագրության ուսուցիչ Ավետիք Տեր-Հակոբյանի «Ֆիզիքական, ազգագրական և քաղաքական աշխարհագրություն Հայաստանի» աշխատասիրության մեջ: Ըստ հեղինակի, նահանգի հայ բնակչության թիվն էր 249361, որից 84000-ը բնակվում էր Վանի գավառակում:[24]

Հայ պատվիրակության Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացրած հուշագրում նշվում էր, որ Վանի վիլայեթի հայերի թիվը, որոնք ապաստան էին գտել Ռուսաստանում, 220000-ից ավել էր:[25]

Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ կան հայ հեղափոխական գործիչ Մալխասի 1908թ. հոկտեմբերի 9-ին կարդացած դասախոսության մեջ: Ըստ հեղինակի վիճակագրության, նահանգի հայ ծխերի թիվն է 14132, որոնք բաշխվում են հետևյալ կերպ՝ Վան և նահիե՝ 4374, Աղիլջևազ՝ 569, Արճեշ՝ 495, Թիմար՝ 1982, Շատախ՝ 763, Գավաշ՝ 1193, Մոկս՝ 709, Կարճկան՝ 768, Նորդուզ՝ 168, Հայոց Ձոր՝ 1087, Արճակ՝ 715, Մահմուդիե՝ 84, Բերկրի՝ 364, Համիդիե՝ 299, Բաշկալե՝ 562:[26] Ուսումնասիրողը տան բնակիչների միջին թիվն ընդունելով 7 մարդ, ստանում է 98,924 հայ բնակչություն:[27] Թեև հեղինակը չի նշում իր տված վիճակագրական տեղեկությունների աղբյուրը, այն հանգամանքը, որ դրանք ոչ մեծ չափով են տարբերվում Մանսկու վիճակագրությունից մեզ բավարար հիմքեր է տալիս ենթադրել, որ այն քաղած է թուրքական աղբյուրներից:

1912թ. լույս է տեսնում հայ պատմաբան, տնտեսագետ և վիճակագիր Ա-Դոյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» ուսումնասիրությունը, ուր հեղինակը ներկայացնում է Վանի վիլայեթի վիճակագրական պատկերը 1909թ. Արևմտյան Հայաստան իր կատարած ճանապարհորդության ընթացքում հավաքած նյութերի հիման վրա: Հեղինակն իր վիճակագրությունը կազմելիս հիմնականում օգտագործել է առաջնորդարաններում պահվող ցուցակները: Ըստ ուսումնասիրողի, առանց Հեքյարիի գավառի՝ նահանգի հայ տների ընդհանուր թիվն էր՝ 16203, հայ բնակչության թիվը՝ 102910, որը բաշխվում էր հետևյալ կերպ. Վան ք.՝ 4000 տուն, 20000 շունչ, Վան-Տոսպ՝ 1577 տուն, 11039 շունչ, Թիմար՝ 1998 տուն, 13986 շունչ, Արճակ՝ 866 տուն, 6062 շունչ, Բերկրի՝ 665 տուն, 4655 շունչ, Ականց ք. 250 տուն, 1500 շունչ, Արճեշ՝ 429 տուն, 3003 շունչ, Աղիլջևազ՝ 761 տուն 5438 շունչ, Հայոց Ձոր՝ 1341 տուն, 7215 շունչ, Խոշաբ՝ 179 տուն, 1253 շունչ, Գյավաշ՝ 963 տուն, 6741 շունչ, Կարճկան՝ 746 տուն, 5222 շունչ, Շատախ՝ 926 տուն, 6282 շունչ, Նորդուզ՝ 164 տուն, 1148 շունչ, Մոկս՝ 868 տուն, 5076 շունչ, Կարկառ՝ 470 տուն, 3290 շունչ:[28]

Ա-Դոն Վան այցելություն է կատարում նաև 1915թ.՝ քաղաքը թուրքերից ազատագրելուց հետո: Առաջնորդարանից ստացված նորագույն տվյալների հիման վրա ուսումնասիրողը պատրաստում է վիճակագրական նոր աղյուսակ, ըստ որի նահանգի հայ բնակչության թիվն, ըստ գավառակների, ուներ հետևյալ պատկերը. Վան ք. տուն՝ 4230, շունչ՝ 22470, Վան-Տոսպ՝ տուն՝ 1592, շունչ՝ 9614, Թիմար. տուն՝ 2525, շունչ՝ 15411, Բերկրի՝ տուն՝ 734, շունչ՝ 5152, Արճեշ. տուն՝ 1303 շունչ՝ 10313, Ալջավազ. տուն՝ 810, շունչ՝ 5889, Հայոց Ձոր. տուն՝ 1383 շունչ՝ 8482, Գյավաշ. տուն՝ 1190, շունչ՝ 6913, Կարճկան. տուն՝ 840, շունչ՝ 6178, Արճակ. տուն՝ 1013, շունչ՝ 6679, Մարայ. տուն՝ 118, շունչ՝ 826, Խոշաբ. տուն՝ 252, շունչ՝ 1746, Նորդուզ. տուն՝ 257, շունչ՝ 1767, Շատախ. տուն՝ 999, շունչ՝ 6721, Մոկս. տուն՝ 721, շունչ՝ 4459, Կարկառ. տուն՝ 420, շունչ՝ 3038, Աղբակ. տուն՝ 482, շունչ՝ 3505, Ջուլամերկ. տուն՝ 73, շունչ՝ 534, Գյավառ. տուն՝ 280, շունչ՝ 1680: Ընդհանուր գումար. տուն՝ 19222, շունչ՝ 121377:[29]

Մի կողմից՝ 1913-14թթ. մարդահամարի ու Ա-Դոյի տվյալների և մյուս կողմից՝ 1910թ. Օրմանյանի ու Պատրիարքարանի 1912թթ. պաշտոնական վիճակագրության տվյալների միջև առկա տարբերությունը բացատրելու համար կարելի է միայն ենթադրություններ անել: Չպետք է մոռանալ, որ առաջին դեպքում մենք գործ ունենք անմշակ, հում նյութի հետ, որն այդ տեսքով նախատեսված չէր հրապարակման: Եվ համապատասխանաբար, քանի որ Օրմանյանի 1910թ. ու Պատրիարքարանի 1912թ. վիճակագրությունը հատուկ պատրաստված էին լայն հանրությանը ներկայացվելու համար, հավանաբար, դրանց հիմքում դրված մարդահամարների տվյալները ճշտվել էին Պատրիարքարանի և Առաջնորդարանների դիվաններում պահվող հաշվառման այլ եղանակների միջոցով ստացած վիճակագրական տվյալների օգտագործմամբ (ծխամատյաններ և այլն): 1913-14թթ. մարդահամարի տվյալները ենթարկելով եկեղեցական ճշտման Պատրիարքարանը քաջ գիտակցում էր, որ դրանք թերի են և ճշտման կարիք ունեն: Ինչևէ, առկա անկախ օժանդակ տվյալները, որոնք, թեև ամբողջական չեն, ապացուցում են, որ նման մոտեցումն արդարացված էր, և, հետևաբար, 1912թ. Պատրիարքարանի վիճակագրությունն առավել հավաստի է Ա-Դոյի տվյալներից:

1913-14 թթ. մարդահամարի տվյալների թերի լինելն ակնհայտորեն երևում է, երբ դրանք համեմատում ենք 1915թ. «Հորիզոն» թերթում տպագրված Վասպուրականի մի շարք ավերված գյուղերի վիճակագրության տվյալների հետ:

Ստորև ներկայացնում ենք մի քանի օրինակ.

Գյուղ	Ա-Դռ 1914		«Հորիզոն» 1915[30]	
	տուն	շունչ	տուն	շունչ
Պզտիկ գյուղ	74	447	80	640
Հարություն	22	180	25	250
Հասպսնակ	31	254	45	400
Մաճառս	24	160	35	315
Ծակծակ	22	180	42	375
Սբ. Բարդուղիմեոս	40	244	35	300
Հազարեն	45	305	100	800
Ալտոռիկ	50	350	70	1000
Խասան Թամրան	27	189	35	300
Պողազքեասան	12	84	50	320
Սանդան	60	390	80	800
Տաղվերան	37	244	40	320
Գործոթ	128	790	117	920
Կասր	30	180	28	240
Ավզարիկ	11	77	12	120
Գումար	613	4074	794	7100

Նկատելի տարբերություն կա նաև Ա-Դռոյի տվյալների և 1915թ. Նազարեթ Մարտիրոսյանի կողմից հավաքած ու «Վան-Տոսպ» թերթում հրատարակված Արճեշ և Արծկե գավառների վիճակագրության միջև: Այսպես, ըստ Մարտիրոսյանի ցուցակի Արճեշի 42 գյուղերում նախքան պատերազմը բնակվում էր 10310 հայ, այն դեպքում, երբ ըստ Ա-Դռոյի ցուցակի հաշվառված 51 գյուղերում հայերի թիվն էր 10313: Արծկեյի 25 գյուղերում ըստ Մարտիրոսյանի ցուցակի կար 952 հայ տուն, իսկ հայ բնակչության թիվն էր 9021: 1914թ. մարդահամարի տվյալներն են՝ 810 տուն, 5889 հայ:[31]

Այս փաստերը մեզ իրավունք են տալիս միանշանակ վիճարկել Ա-Դռոյի տվյալների հավաստիությունը և որպես ավելի արժանահավատ ընդունել Օրմանյանի և 1912թ. Ապահովաց հանձնաժողովի վիճակագրությունը:

Աղյուսակ 3. Հայկական այլ աղբյուրների վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

	1877 Ռաֆֆի	1880 Սովելոց հանձնաժողով.	1880 Երիցյանց	1890 Ավետիսյան	1904 Ծերուկ	1912 Ա-Դռ
Տուն	43000	-	18455	-	18600[32]	16203
Շունչ	-	249361	175773	194000	145000	102910

3. Ռուս և արևմտյան հեղինակների վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

Վանի վիլայեթի հայ ազգաբնակչության վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում արևմտյան և ռուսական աղբյուրները: Դա նահանգում անգլիական և ռուսական դիվանագիտական ներկայացուցիչների տվյալներն են, հյուպատոսական զեկույցները և ռազմական հետախույզների տեղեկությունները: Օտարերկրյա ճանապարհորդների և ուսումնա-

սիրողների վիճակագրական տվյալներից որոշակի արժեք են ներկայացնում՝ անգլիացի Լինչի և ֆրանսիացի Քինեյի տեղեկությունները:

1865թ. անգլիացի հյուպատոս Դելիելը, օգտվելով թուրքական աղբյուրներից, նշում է որ նահանգում առկա է 110000 հայ բնակչություն: Ըստ գավառակների և գյուղախմբերի այն հետևյալ կերպ էր բաշխվում.

1. Վանի գավառ՝ 90100 հայ, այդ թվում Վան ք.՝ 10000, Վանի կազա՝ 32000, Բերկրի՝ 11000, Մոկս՝ 4400, Արճեշ՝ 4500, Աղիլջևազ՝ 1600, Ալպաք՝ 2300, Կարչկան՝ 2800, Գավաշ՝ 2800, Ռստան՝ 8800, Նորադուզ՝ 4500, Մահմուդիե՝ 2200 հայ:

2. Հեքյարի՝ 20000 հայ, այդ թվում՝ Աղբակ՝ 10000, Կոտուր՝ 1000, Շատախ՝ 1000, Ջուլամերկ՝ 4000, Գավառ՝ 4000 հայ:[33]

1869թ. անգլիական հյուպատոս Թեյլորը, հիմք ընդունելով նույն թուրքական տվյալները, նշում է նահանգի հայ բնակչության 84800 թվաքանակը:[34]

Ըստ 1881թ. Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Սոլանելլիի կողմից բերվող վիճակագրական ցուցակի, նահանգում բնակվում էր 40000 հայ ընտանիք: Ինչպես Սոլանելլին ինքն է նշում՝ վիճակագրական տեղեկությունները նրան տրամադրվել է «հատուկ առաքելությամբ մը շրջող անձե մը գրեթե հայերեն բնակուած Տաճկաստանի ամեն գավառներուն մեջ, ուստի և բնականապես մեծագույն ճշտության երևույթ ունի»:[35]

Օսմանյան կայսրության ասիական նահանգների, գավառների, գավառակների և քաղաքների բնակչության ազգային կազմի վերաբերյալ վիճակագրական տվյալներ է պարունակում Վիքալ Քինեյի «Ասիական Թուրքիա» աշխատությունը, որի չորս հատորները հրատարակվել են 1890-95թթ: Ինչպես նշում է հայ պատմաբան Գալստյանը, այն, մանրամասնությունների տեսակետից եզակի լինելով, դարձել է բազմաթիվ ուսումնասիրությունների, հանրագիտարանների, տեղեկատուների և դիվանագիտական փաստաթղթերի հիմնական սկզբնաղբյուրը: Իր հերթին, իր վիճակագրական աղյուսակները կազմելիս, Վ. Քինեն որպես հիմք է ընդունել թուրքական պաշտոնական վիճակագրությունը:

Սակայն այս հանգամանքը չի խանգարում հեղինակին սուր քննադատության ենթարկել օսմանյան վիճակագրական համակարգը և դրանով իսկ՝ անուղղակի կերպով բացահայտել իր իսկ կողմից տրվող տվյալների իրական արժեքը: «Քառին բուն նշանակությամբ պաշտոնական վիճակագրություն բացարձակապես գոյություն չունի Թուրքիո մեջ», - ուղղակիորեն արձանագրում է հեղինակը:[36] Մեկ այլ դեպքում Քինեն ավելացնում է. «Վիճակագրական այս գիտությունը, այնքան օգտակար ու այնքան շահեկան, ոչ միայն չէ մտած դեռ երկրին բարքերուն և սովորությանց մեջ, այլ և նույնիսկ պետական շրջանները կողմնակցությամբ ու հետին մտքերով կմերժեն ամենադույզն խուզարկություններն իսկ»:[37]

Ֆրանսիացի ուսումնասիրողը նահանգի ազգաբնակչության մասին նշում է հետևյալ թվերը՝

1. Վանի սանջակ՝ 64,998, որից 64,000 լուսավորչական, 708՝ կաթոլիկ, 290՝ բողոքական: Այդ թվում. մերկեզ-կազա Վան՝ 12498, Կարճկան՝ 7890, Շատախ՝ 6500, Գեվաշ՝ 4850, Աղիլջևազ՝ 8138, Արճեշ՝ 9490, Բերկրի՝ 7270, Մոկս՝ 8432:

2. Հեքյարիի սանջակ՝ 15000 հայ, այդ թվում՝ Ջուլամերկ՝ 2000, Աղբակ՝ 3000, Գավառ՝ 1900, Մահմուդիե՝ 2500, Նորդուզ՝ 2600, Մամուրեթ

ուլ Համիդ՝ 3000: Ընդհանուր գումար՝ 79998 հայ, որից 79000 լուսավորչական, 708-ը՝ կաթոլիկ, իսկ 290-ը՝ բողոքական:[38]

Վանում ռուսական փոխհյուպատոս Մանսկին, որին քնավ էլ չի կարելի «մեղադրել» հայասիրության մեջ, քննելով Քինեյի տվյալները Վանի նահանգի վերաբերյալ, նշում է, որ այն նշանակալից անճշտություններ է պարունակում: Մասնավորապես, հեղինակը, գտնելով, որ Վանի գավառակի վերաբերյալ Քինեյի վիճակագրական տվյալները իրականությունից ցածր են, ենթադրում է, որ այդ թիվը վերաբերում է միայն կազայի գյուղերի ազգաբնակչությունը, իսկ Վան քաղաքի հետ միասին (ըստ Քինեյի՝ 13500 հայ) հայերի թիվը պետք է լինի՝ 26000:[39] Շարունակելով Քինեյի տվյալների քննությունը՝ ուսումնասիրողը կասկածի է ենթարկում և Վան քաղաքի վիճակագրությունը (13500 հայ): Մայնսկին, հիմնվելով իր սեփական դիտարկումների վրա, որոնք հաստատվում են անգամ թուրքական պաշտոնական տվյալներով, գտնում է, որ քաղաքի հայ բնակչության թիվը կազմում է 20-25 հազար:[40]

Վանի նահանգի հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ է հաղորդում և անգլիացի ճանապարհորդ Լինչը: Ըստ հեղինակի՝ 1890թ-ին վերաբերող վիճակագրության համաձայն, որի հիմքում դրված են թուրքական պաշտոնական տվյալները, Վանի սանջակի հայ բնակչության թիվն էր 75644, որից Վան ք. 20000, մերքեզ կազա Վան՝ 27000, Վանի սանջակի այլ կազաներ՝ 28644 հայ:[41]

1899թ., Վանում ռուսական փոխհյուպատոս Մանսկու կողմից հրատարակվում են նահանգի գյուղ առ գյուղ վիճակագրական ցուցակները, որոնք քաղված են թուրքական աղբյուրներից: Ըստ Մանսկու տվյալների նահանգում կար 13735 հայ ընտանիք, այդ թվում՝ Վան ք.՝ 2887, Վանին մերձակա գյուղեր՝ 1373, Թիմար՝ 1782, Արճակ՝ 582, Հայոց Ձոր՝ 1087, Բերկրի՝ 364, Արճեշ՝ 495, Աղիլջևազ՝ 569, Գյավաշ՝ 831, Կարկառ՝ 93, Կարչկան՝ 768, Շատախ՝ 778, Նորդուզ՝ 168, Մոկս՝ 709, Մահմուդիե՝ 84, Խոշաբ՝ 299, Գավառ՝ 96, Ջուլամերկ՝ 85, Աղբակ՝ 562 հայ: Ընտանիքների անդամների միջին թիվը Մանսկին ընդունում է 8 հոգի, ինչը նրան հիմք է տալիս նշելու նահանգի հայ ազգաբնակչության քանակը՝ 109880 հայ:[42]

Ըստ Վանում ռուսական փոխհյուպատոս Օլֆերևի 1912թ. նոյեմբերի 25-ով թվագրված զեկուցագրի նահանգում բնակվում էր 120000 հայ:[43]

Թուրքական պատմագրությունը, ձգտելով հավաստիություն հաղորդել օսմանյան պաշտոնական վիճակագրության տվյալներին, վկայակոչում է արևմտյան աղբյուրների տվյալները՝ հատկապես Քինեյի վիճակագրությունը: Սակայն, Արևմտյան ուսումնասիրողների ընդհանրական վիճակագրական տվյալները չունեն նախնական, ինքնուրույն աղբյուրագիտական նշանակություն: Նրանց տվյալները պայմանավորված են նրանով, թե ի՞նչ աղբյուրից է օգտվում հետազոտողը՝ օսմանյա՞ն թե՞ հայկական: Իսկ թե, հատկապես ո՞ր տվյալներն արևմտյան հեղինակը կընդունի որպես հավաստի, մեծապես կախված էր հեղինակի քաղաքական հակվածությունից ու կողմնորոշումից:[44]

Արևմտյան ուսումնասիրողները, Թուրքահայաստանով ճանապարհորդելիս, իհարկե հնարավորություն չունեին ձեռնարկել հարցի քիչ թե շատ խորը հետազոտություն: Նրանց մեծամասնությունը, հիմք ընդունելով տեղական սալնամեների և թուրքական պաշտոնական վիճակագրական այլ տվյալները, սահմանափակվում էին դրանց որոշակի սրբագրու-

մով՝ ճանապարհորդության ընթացքում հավաքած սեփական կցկտուր տվյալներին և անձնական տպավորություններին համապատասխան:

Այն հանգամանքը, որ 19-րդ դարի վերջին հայերին համակրող շատ հեղինակներ (օրինակ՝ Լինչը), օգտագործում էին օսմանյան վիճակագրական տվյալները, պայմանավորված էր նաև նրանով, որ հաճախ հայկական վիճակագրությունը այդ հեղինակներին հասու չէր. երկրում տիրող վախի մթնոլորտը թույլ չէր տալիս Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին և, առավել ևս, տեղական եկեղեցական կառույցներին հրապարակել սեփական վիճակագրությունը:

Աղյուսակ 4. Ռուս և արևմտյան հեղինակների վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

	1865 Դելիել	1869 Թեյլոր	1881թ. Սուանների.	1891 Քինե	1896թ. Լինչ	1899 թ. Մանսկի	1912թ. Օլֆերև
Տուն	-	-	40000	-	-	13735	
Շուն	110000	84800	-	79998	75644	109880	120000

Այժմ փորձենք ներկայացնել նահանգի հայ բնակչության թվաքանակի մեր հաշվարկները: 1880-ական թթ. համար հայ բնակչության նվազագույն թիվը տալիս են օսմանյան մարդահամարները՝ 60000, առավելագույնը՝ Ապահովաց հանձնաժողովի կողմից պատրաստած 1882թ. վիճակագրական տվյալներն են՝ 400000 հայ: Տատանվում է նաև վիլայեթի հայ ծխերի վիճակագրությունը՝ 13735 (Մանսկի), 18455 (Երիցյան) և 40000-43000 (Բաֆֆի, Սոլանելլի) տուն:

Առաջին հերթին պետք է միանշանակ մերժել օսմանյան պաշտոնական մարդահամարի տվյալները: Վանի վիլայեթի համար թուրքական տվյալների շինծու լինելը լավագույնս երևում է, երբ մենք համեմատում ենք դրանք 1865թ. և 1875 թթ., այսինքն մինչև Հայկական հարցի միջազգայնացումը լույս տեսած թուրքական նահանգային սալնամեների տվյալների հետ, որոնք վկայում են առնվազն 100-110 հազար հայ բնակչության մասին: Օսմանյան մարդահամարի տվյալները հերքվում են անգամ Մանսկու կողմից հրատարակված՝ վիլայեթի հայ ընտանիքների (գյուղ առ գյուղ) թուրքական ցուցակներով, ըստ որի վիլայեթում հայ ծխերի թիվն էր 13735:

Աղյուսակ 5. Վանի վիլայեթի հայ բնակչության աճն ըստ օսմանյան պաշտոնական մարդահամարների տվյալների

	1885	1914	Աճը
Հայեր	59382	67792	12 (04) %

Վանի վիլայեթի հայ բնակչության թվաքանակն իրականից ցածր էին ցույց տալիս և Հայոց պատրիարքարանի մարդահամարները: Բնակչության թերհաշվառումը հատկապես մեծ էր 19-րդ դարի 80-ական թթ.: Այսպես, ինչպես ցույց է տալիս 1878-80 և 1912 թթ. պատրիարքարանի՝ մեծ տերություններին ներկայացրած պաշտոնական վիճակագրական տվյալների համադրումը, 1878-1912թթ., առանց Հեքյարիի գավառի Վանի նահանգի, բնակչությունը աճել է 38 %-ով, սակայն իրականում նման աճը անհնարին էր Աբդուլ Համիդի իշխանության տարիներին: Ընդհակառակը, ինչպես վկայում են աղբյուրները, աբդուլհամիդյան հակահայկական միջոցառումների հետևանքով, որոնց գագաթնակետը դարձավ 1894-96թթ. կոտորածները, տեղի էր ունենում հայ բնակչության թվի նվազում:

Աղյուսակ 6. Վանի վիլայեթի հայ բնակչության աճն ըստ հայոց պատրիարքարանի պաշտոնական տվյալների (1878-1914)

	1878	1912	Աճը
Հայեր	133859	185,000	38 (1)%

Վանի նահանգի հայ բնակչության որոշակի աճի մասին կարելի է խոսել միմիայն 1909 թվականից հետո, երբ երիտթուրքերի՝ իշխանության գալու հետևանքով պետության կողմից ուղղակիորեն վարվող հակահայկական քաղաքականությունը առժամանակ թուլացավ: Հետևաբար, հայ պաշտոնական վիճակագրության մեջ արձնագրվող՝ վերոհիշյալ շրջանի՝ Վանի վիլայեթի հայ բնակչության թվաքանակի աճն արդյունք էր ոչ թե իրական աճի, այլ վիճակագրական մարդահամարների՝ առավել ճշգրիտ կազմակերպմամբ ստացված՝ ավելի ստույգ տվյալների:

Նահանգի 19-րդ դարի 80-ական թթ. հայ բնակչության թվաքանակի համար, մեր կարծիքով, արժանահավատ են հեղինակավոր եկեղեցական հայկական աղբյուրից քաղված Բաֆֆու և Սոլանելլիի տվյալները (40000-43000 հայ տուն): Տան անդամների միջին թիվն ընդունելով 8 հոգի կստանանք 320000 կամ նվազագույնը՝ 300000 հայ:

Մեծ Եղեռնի նախօրյակին Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակը պարզելու համար կարելի է ելակետային ընդունել պատրիարքարանի 1912թ. տվյալները, որոնք, ինչպես մենք արդեն հիմնավորել ենք, ավելի արժանահավատ են, քան 1913-1914թթ. մարդահամարի տվյալները: Հաշվի առնելով թերհաշվառումը և այն հանգամանքը, որ դրանք ավելի վաղ ծագում ունեն, այդ թիվը մենք շտկում ենք՝ ավելացնելով այն 5%-ով: Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վանի նահանգում բնակվում էր շուրջ 200000-205000 հայ:

Աղյուսակ 7. Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակն ըստ հայկական, օսմանյան և արևմտյան գլխավոր վիճակագրական աղբյուրների տվյալների (1880-1899).

	1880 Սովետոց ի-վ	1890 Քինե	1899 Մահակի
	շունչ	շունչ	տուն
Վանի գ-ռ			
Վան	93648	19768	8075
Արճեշ	26897	9490	495
Արծկե	15615	8138	569
Գյավաշ	41288	21172	2401
Շատախ	26245	9100	946
Մահմուդի	-	2500	84
Գումար	203693	70168	12570
Հեքյարի գ-ռ			
Աղբակ	9959	3000	562
Ջուլամերկ	9887	2000	85
Գավառ	5975	1900	96
Խոշաբ	9966	3000	299
Շամդինանան		-	-
Գումար	35787	9900	1042
Ընդհ. գումար	239480	80068	13612

Աղյուսակ 8. Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակն ըստ հայկական, օսմանյան և արևմտյան գլխավոր վիճակագրական աղբյուրների տվյալների (1909-1914).

	1909 Ա-Դ-ո		1914 օսման-յան	1914 Ա-Դ-ո		1913-14 պատրիարքարան
	տուն	շունչ	շունչ	տուն	շունչ	շունչ
Վանի գ-ո						
Վան	10447	62957	33789	11477	67810	64806
Առճեշ	679	4503	8083	1303	10313	9691
Առծկե	761	5438	4849	810	5889	6209
Գավաշ	3047	20329	10520	3289	21414	20235
Շատախ	1090	7430	4292	1256	8488	6560 (ածանց Նորդուզի)
Մահմուդի	-	-	528	118	826	5000
Գումար	16203	102910	62061	18135	113912	112501
Հեզյարդի գ-ո						
Արդակ	-	-	3461	482	3505	7157
Ջուլամերկ	-	-	296	73	534	636
Գավառ	-	-	959	280	1680	1184
Խոշաբ	-	-	1015	252	1746	3000 (Նորդուզը ներառյալ)
Շամդինան	-	-	-	-	-	-
Գումար			5731	1087	7465	11977
Ընդհ. գումար			67792	19222	121377	124478

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ինչպես հայտնի է Օսմանյան կայսրության տարածքը տրոհված էր վարչատարածքային մեծ և փոքր միավորների: Դրանցից խոշորագույնները վիլայեթներն էին (հայկական աղբյուրներում՝ նահանգ), դրանք բաժանվում էին սանջակների (գավառ), սանջակները՝ կազաների (գավառակ), իսկ կազաները՝ նահիեների (գյուղախումբ): Վերոհիշյալ վարչատարածքային միավորումների համար մենք հավասարապես գործածում ենք թե՛ թուրքական պաշտոնական վիլայեթ, սանջակ, կազա, նահիե, թե՛, համապատասխանաբար, հայկական՝ նահանգ, գավառ, գավառակ և գյուղախումբ անվանումները:

[2] Տես՝ Օրմանյան Մ. Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 261-262:

[3] British documents on Ottoman Armenians, ed. by Bilal Simsir, vol. 2, Ankara, 1983, p. 129.

[4] Karpat. Ottoman population 1830-1913, Madison, The University of Wisconsin Press, 1985, p. 146-147.

[5] Ibid, p.196.

[6] Ibid, p 166.

[7] Ibid, p 182.

[8] MacCarthy Justin, The Arab World, Turkey and the Balkans (1878-1914). Boston, Mass. 1982. p. 60.

[9] Տես՝ Տկլանց Ե. Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873), Երևան, 1991, էջ 20:

[10] 1878թ. մարդահամարի ցուցակները հրատարակել է հայ պատմաբան Բաղալյանը (Տես՝ Բաղալյան Գ. Վանի նահանգի հայաբնակ բնակավայրերի ցուցակներն ըստ առանձին գավառակների և գյուղախմբերի, «Բանբեր Երևանի հա-

մալսարանի», 1987, №2 էջ 83-110): Գավառակ առ գավառակ հանրագումար հաշվումներն ըստ հրատարակված ցուցակի կատարել է հայ ուսումնասիրող Կարայանը (Տես՝ Karayan Sarkis Y., Demography of Van Province, 1844-1914, in Armenian Van/Vaspurakan, edited by Richard G. Havhannisian, N.Y., 2000, pp. 195-208.)

[11] Van den Steen de Jehay F., De la situation legale des Sujets Ottomans non-musulmans, Bruxelles,1906, p. 61.

[12] Օրմանյան Մաղաքիա Արք. նշվ. աշխ, էջ 261:

[13] Population Armenienne de la Turquie avant la guerre. Statisitques etablies par le Patriarcat Armenienne de Costantinople, Paris, 1920. p.9.

[14] Տես՝ Թեոդիկ. Ամենուն տարեցույց, Կ.Պոլիս, 1922, էջ 262:

[15] Տես՝ Թեոդիկ. Գոգգոթա հայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարին, Նյու Յորք, 1985, էջ 34-38:

[16] Տես՝ Բաֆֆի. Երկերի ժողովածու, հատ 4, Երևան, 1956, էջ 488:

[17] Տես՝ Պարտիզակցի Վ. Խոսք գՀայրենյաց, Կ. Պոլիս, 1911 էջ 47:

[18] Տես՝ Թոխմախյան Ա. Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 55:

[19] Տես՝ Ерицов А. стр. 35-38.

[20] Տես՝ Մ. Ա. Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ. Մարսել, 1890, էջ Թ:

[21] Նույն տեղում, էջ 44:

[22] Տես՝ «Մուրճ», 1904, №3, էջ 46:

[23] Նույն տեղում, №4, էջ 25:

[24] Տես՝ Տեր-Հակոբյան Ա. Ֆիզիքական, ազգագրական և քաղաքական աշխարհագրություն Հայաստանի, Թիֆլիս, 1914, էջ 99:

[25] Տես՝ Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Երևան, 1919, էջ 17:

[26] Տես՝ Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909, էջ 15:

[27] Նույն տեղում, էջ 16:

[28] Տես՝ Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912,էջ 78:

[29] Տես՝ Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, Երևան, 1917, էջ 30:

[30] Տես՝ Հորիզոն, 1915, №№152,158:

[31] Տես՝ «Վան-Տոսպ», 1916, № 16:

[32] Առանց Վան քաղաքի.

[33] Տես՝ Турецкая империя (Из Военно-Статистического сборника за 1868г.), Спб, 1868, стр. 209-210.

[34] Տես՝ British documents...v.1, Ankara, 1982, p. 60:

[35] Տես՝ Սոլանելլի Կ. Տեսություն ի վերայ գավառաց Հայաստանի, «Բազմավեպ», 1882, հ. 40, էջ290:

[36] Տես՝ Cuinet V. La Turquie d'Asie, t.1, Paris, 1892, p V: Մեջբերում ենք ըստ Մեսրոպ Գ. Հայաստան աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետներով, Կ. Պոլիս, 1919, էջ52:

[37] Նույն տեղում, էջ 53:

[38] Տես՝ Маевский В.Т. Ванский вилайет. Военно-статистическое описание. Тифлис, 1901, стр. 96-97.

[39] Տես՝ Маевский В.Т. Указ. соч., стр. 89-90: Այս ավելացումով Վանի վիլայեթի հայ ազգաբնակչության թիվն ըստ Քինեյի դառնում է 93500:

[40] Նույն տեղում, էջ 100-101:

[41] Տես՝ Линч Д., Указ. соч., стр. 532:

[42] Տես՝ Маевский В. Т. Указ. соч., стр. 244-390. Հաշվումներն ըստ ցուցակի կատարվել են մեր կողմից:

[43] Տես՝ Сборник дипломатических документов. Реформы в Армении 1912-1914гг., Петроград, 1915, стр. 288.

" Զարմանալի կլինեք, եթե օսմանյան կառավարության կողմից վարձված պաշտոնյան, ինչպիսին, օրինակ, Քինեն էր, իր վիճակագրական հաշվումները հիմներ ոչ օսմանյան վիճակագրությունից բխող տվյալների վրա:

Резюме

Статистика армянского населения Ванского вилайета 1878-1914 (попытка сопоставления и анализа источников).

Роберт Татоян

В статье сопоставляются и анализируются основные целостные статистические данные по численности армянского населения Ванского вилайета. Представленные статистические данные сгруппированы по происхождению: турецкие, армянские и западные.

Путем сравнительного анализа источников доказывается, что турецкая статистика принижала реальную численность армянского населения. Наиболее близкой к истине нужно считать статистику Армянского патриаршества, согласно которой в Ванском вилайете проживало около 200000 армян.

В статье представлены сводные статистические таблицы.

Summary

Statistics of the Armenian Population of Van Vilayet 1878-1914 (Attempt of Comparison and Analysis of Sources).

Robert Tatoyan

In the article the basic complete statistical data on number of the Armenian population of Van vilayet are compared and analyzed. The presented statistical data are grouped by origin - Turkish, Armenian and Western.

By the comparative analysis of sources is proved, that the Turkish statistics belittled real number of the Armenian population. And the data that are the most close to a reality is the statistics of the Armenian Patriarcate, according to which in Van vilayet lived about 200000 Armenians.

The summary of statistical tables are presented at the end of the article.